

Արձանագրություններ Առևտրի Կենտրոնների Համար. Հավելված E

Վերջին թարմացումներ (փոփոխությունները նշված են դեղինով)

12/27/2020. Վերանայվել է՝ հստակեցումներ անելու՝ կապված առևտրի կենտրոններում ներսի և դրսի նստատեղերի հետ:

- Առևտրի կենտրոնները պետք է համոզվեն, որ ներսի բոլոր հանրային նստատեղերը փակ են:
- Նախկինում առկա բոլոր անշարժ և մշտական նստատեղերը, որոնք հասանելի են հաճախորդների համար, ներառում են հիշեցումներ այն մասին, որ հաճախորդները պետք է առնվազն 6 ոտնաչափ հեռավորություն պահպանեն իրենց տան անդամ չհանդիսացող անձանցից:
- Բոլոր ժամանակավոր կամ շարժական սեղաններն ու աթոռները, որոնք տեղադրված են ներսում կամ դրսում, պետք է հեռացվեն կամ փակվեն հանրային օգտագործման համար:

Հաճախորդներն ու այցելուները պետք է մշտապես դիմակ կրեն և չեն կարող ուտել կամ խմել առևտրի կենտրոնի տարածքում գտնվելու ընթացքում: Յուրաքանչյուր մշտական նստատեղի կողքին կամ մոտակայքում տեսանելի վայրում փակցված են ցուցանակներ, որոնք հաճախորդներին հիշեցնում են դիմակ կրելու, ֆիզիկական հեռավորություն պահպանելու և առևտրի կենտրոնի տարածքում գտնվելու ընթացքում չուտելու կամ չխմելու պահանջների մասին:

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչությունը հետևում է Նահանգային ուղեցույցներին, որպեսզի առևտրի կենտրոնները, մուլերը և փոխանակման հանդիպումները (swap meeting) և նրանց վարձակալող մանրածախ բիզնեսները շարունակեն բաց մնալ՝ համավարակի այս փուլում փոփոխությունների ենթարկվելով: Ստորև ներկայացված պահանջները նախատեսված են առևտրի փակ և բացօթյա կենտրոնների, նպատակային առևտրի կենտրոնների, բաց առևտրային կոմպլեքսների և առևտրի-մեծ հանրախանութների (malls), ինչպես նաև շուկաների համար (հավաքականորեն՝ «Առևտրի կենտրոններ»): Առևտրի կենտրոնները պետք է համոզվեն, որ վարձակալները, ներառյալ մանրածախ վարձակալները և վաճառողները, իրազեկ են այն արձանագրություններին, որոնք վերաբերում են իրենց գործունեությանը: Այդ բիզնեսները («վարձակալներ և վաճառողներ») պատասխանատու են արձանագրությունների իրականացման համար, բայց առևտրի կենտրոններին խորհուրդ է տրվում նույնպես պահանջել իրենց վարձակալներից սույն արձանագրությունների կատարումը: Նահանգապետի կողմից այս հատուկ մանրածախ բիզնեսների համար պարտադրված պայմաններից բացի, այս ձեռնարկությունների տեսակները պետք է հետևեն նաև Առևտրի Կենտրոնների համար նախատեսված սույն Ստուգաթերթի մեջ նշված պայմաններին:

Ընդհանուր առմամբ առևտրի կենտրոններում առավելագույն զբաղվածությունը, ինչպես նշված է վերևում, սահմանափակվում է առավելագույն զբաղվածության 20%-ով՝ համաձայն Նահանգային Տարածաշրջանային Տանը Մնալու Հրամանի, որը տրվել է 2020 թ.-ի Դեկտեմբերի 3-ին և ուժի մեջ է մինչև 2020 թվականի Դեկտեմբերի 20-ի երեկոյան ժամը 11:59-ից (PST) մինչև հետագա ծանուցումը: Փակ Ձեռնարկությունները, որոնք փակ մեծ հանրախանութների (mall) կամ փակ առևտրի կենտրոնի մաս են կազմում և միայն առևտրի կենտրոնի ներսից մուտք ունեն, բաց են, սակայն սահմանափակվում են առավելագույն 20% զբաղվածությամբ:

Համաձայն Նահանգային Տարածաշրջանային Տանը Մնալու Հրամանի՝ ցանկացած միջոցառում կամ հավաքույթ՝ ներառյալ տոնական գործողությունները, ինչպիսիք են Ձմեռ Պապի հետ լուսանկարվելը, տոնածառի լուսավառումը կամ մենորայի լուսավառումը, չի թույլատրվում:

Բոլոր մշտական և անշարժ, բացօթյա նստատեղերը, որոնք բաց են հանրության համար, յուրաքանչյուր մշտական նստատեղի կողքին կամ մոտակայքում տեսանելի վայրում պետք է ունենան ցուցանակներ, որոնք հաճախորդներին հիշեցնում են դիմակ կրելու, ֆիզիկական հեռավորություն պահպանելու և առևտրի կենտրոնի տարածքում գտնվելու ընթացքում չուտելու կամ չխմելու պահանջների մասին:

Առևտրի կենտրոնի տարածքում գտնվող բոլոր ժամանակավոր կամ շարժական սեղանները և աթոռները պետք է հեռացվեն հանրությանը հասանելի տարածքներից կամ պետք է փակվեն հանրության համար: Հանրությանը/այցելուներին պետք է հիշեցնել, որ առևտրի կենտրոնի տարածքում գտնվելու ընթացքում չի կարելի ուտել կամ խմել:

Առևտրի կենտրոնները և ոչ հիմնական ձեռնարկությունները, որոնք գտնվում են առևտրի կենտրոններում, պետք է փակվեն բիզնեսի համար ժամը 22:00-ից մինչև 5:00-ն ընկած ժամանակահատվածում: Հիմնական ձեռնարկությունները, որոնք արտաքին առևտրի կենտրոնի մաս են կազմում կամ ունեն արտաքին հանրային մուտք, որպես փակ առևտրի կենտրոնի մաս, կարող են շարունակել իրենց գործունեությունը այս ժամերից դուրս: Բոլոր վարձակալները պետք է հետևեն Հանրային Առողջապահության Վարչության (DPH) համապատասխան ոլորտի արձանագրություններին և բոլոր մյուս պետական և տեղական կիրառելի օրենքներին և հրահանգներին:

Խնդրում ենք նկատի ունենալ, որ այս փաստաթուղթը կարող է թարմացվել ըստ լրացուցիչ տեղեկությունների և ռեսուրսների հասանելիության, ուստի թարմացումների համար անպայման հաճախակի ստուգեք Լոս Անջելես Շրջանի վեբ կայքը <http://www.ph.lacounty.gov/media/Coronavirus/>:

Առևտրի կենտրոնի գործառնություններին վերաբերող լրացուցիչ արձանագրությունները նույնպես պետք է պահպանվեն.

- Անհատական ինամքի ճառայություններ
- Ռեստորաններ
- Մանրածախ Հաստատություններ

Այս ստուգաթերթը ներառում է.

- (1) Աշխատավայի քաղաքականությունն ու գործելակերպը՝ ուղղված աշխատողների առողջության պահպանմանը;
- (2) Ֆիզիկական հեռավորության ապահովման միջոցառումներ;
- (3) Վարակի վերահսկման ապահովման միջոցառումներ;
- (4) Աշխատողների և հանրության հետ հաղորդակցություն;
- (5) Կարևոր ծառայությունների հավասար հասանելիության միջոցառումներ:

Պետք է հետևել այս հինգ հիմնական ոլորտներին ըստ ձեր հաստատության՝ վերաբացման արձանագրությունների մշակման:

Այս արձանագրության մեջ ընդգրկված բոլոր բիզնեսները պետք է իրականացնեն ստորև նշված բոլոր կիրառելի միջոցառումները և պատրաստ լինեն բացատրել, թե ինչու որևէ չիրականացված միջոցառում չի վերաբերում իրենց բիզնեսին:

Բիզնեսի անունը՝ _____

Հաստատության հասցեն՝ _____

Առավելագույն զբաղեցվածությունը՝ ըստ **Շինության** Օրենսգրքի՝ _____

Հաստատության մոտավոր ընդհանուր քառակուսի ոտնաչափ _____

տարածքը, որը բաց է
հանրությանը`

**A. ԱՇԽԱՏԱՆՈՒՄԻ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ԶԱՐԱԶԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ (ՆՇԵՔ ԲՈԼՈՐ ԱՅՆ ԿԵՏԵՐԸ, ՈՐՈՆՔ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ ԵՆ ՁԵՐ
ՁԵՆԱՎՐԿՈՒԹՅԱՆԸ)**

- Բոլոր նրանք, ովքեր կարող են տնային պայմաններում կատարել իրենց աշխատանքային պարտականությունները, ուղղորդված է այդպես անել:
- Խոցելի աշխատողներին (65 տարեկանից բարձր տարիքի և քրոնիկական հիվանդություններ ունեցող մարդկանց) հանձնարարվում է այնպիսի աշխատանք, որն ըստ հնարավորության կարելի է տնից կատարել և նրանք պետք է քննարկեն ցանկացած հարցեր իրենց բժշկի կամ մասնագիտական բժշկության ծառայության հետ, որպեսզի կարողանան ճիշտ որոշումներ ընդունել աշխատանքի վայր վերադառնալու վերաբերյալ:
- Աշխատանքային գործընթացները հնարավորինս վերաձևակերպվում են՝ մեծացնելու աշխատողների՝ տնից աշխատելու հնարավորությունները:
- Այլընտրանքային, փոփոխված կամ հերթափոխով ժամանակացույցեր են հաստատվել՝ առավելագույնի հասցնելու ֆիզիկական հեռավորության պահպանումը:
- Բոլոր աշխատակիցներին ասվել է հիվանդ ժամանակ չգնալ աշխատանքի կամ COVID-19-ով վարակակիր անձի հետ շփում ունենալու դեպքում: Աշխատակիցները գիտակցում են, որ անհրաժեշտ է հետևել Հանրային Առողջապահության Վարչության՝ ինքնամեկուսացման և կարանտինի ուղեցույցին, եթե կիրառելի է: Աշխատավայրի բացակայության քաղաքականությունը վերանայվել և փոփոխվել է՝ ապահովելու, որ աշխատողները չտուժեն, եթե հիվանդության հետևանքով տանը մնան:
 - Աշխատակիցներին տրամադրել է տեղեկություն գործատուի կամ կառավարության կողմից հովանավորվող արձակուրդի նպաստների վերաբերյալ, որը աշխատողը իրավունք կունենա ստանալ, ինչն էլ ֆինանսապես ավելի հեշտ կդարձնի նրա տանը մնալը: Տե՛ս հիվանդության հիմքով աշխատողին տրամադրվող արձակուրդի և COVID-19-ի համար աշխատողների փոխհատուցման կառավարության աջակցման [ծրագրերի](#)՝ ներառյալ աշխատողների կողմից հիվանդության հիմքով արձակուրդ ստանալու իրավունքների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններն անմիջապես [Ընտանիքների Կորոնավիրուսին Առաջին Արձագանքի Օրենքի](#) ներքո, և աշխատակիցների համար աշխատողների փոխհատուցման վճարներ ստանալու իրավասության և Մարտի 19-ից Յուլիի 5-ի ժամանակահատվածում COVID-19-ով վարակման դեպքերի ի հայտ գալուն առնչվող աշխատանքների մասին տեղեկությունները Նահանգապետի [N-62-20 Գործադիր Հրամանի](#) ներքո:
- Տեղեկանալու դեպքում, որ մեկ կամ ավելի աշխատողներ դրական արդյունք են ցույց տվել կամ COVID-19-ի ախտանիշներ ունեն, գործատուն ունի պատրաստի ծրագիր կամ արձանագրություն՝ այդ անձ(անց)ին տանը ինքնամեկուսացնելու համար և պետք է անմիջապես ինքնա-կարանտին պահանջի բոլոր աշխատողներից, ովքեր աշխատանքի վայրում շփվել են այդ անձ(անց)ի հետ: Գործատուի ծրագիրը պետք է նախատեսի արձանագրություն, ըստ որի կարանտինացված բոլոր աշխատողները կստուգվեն՝ կամ հնարավորություն կունենան ստուգվելու COVID-19-ի համար, որպեսզի պարզեն, թե արդյոք աշխատավայրում եղել են այլ վարակման դեպքեր, ինչը կպահանջի COVID-19-ի վերահսկման լրացուցիչ միջոցառումներ: Տես՝ Հանրային Առողջապահության ուղեցույցը [աշխատավայրում COVID-19-ին արձագանքելու վերաբերյալ](#):
- Իրականացվում են [մուտքի ստուգումներ](#)՝ նախքան նրանց կթույլատրվի աշխատավայր մտնել: Ստուգումները պետք է ներառեն հազի, շնչարգելության, դժվարացած շնչառության, ջերմության կամ դողերոցքի դիտարկում, ինչպես նաև հարցում, թե արդյոք անձը տվյալ պահին գտնվում է մեկուսացման կամ կարանտինի հրամանների ներքո: Այս ստուգումները կարող են կատարվել հեռավար կարգով կամ անհատապես՝ աշխատակցի ժամանելուն պես: Հնարավորության դեպքում աշխատավայրում պետք է կատարվի ջերմաչափում:
- Այն դեպքում, երբ 14 օրվա ընթացքում աշխատավայրում հայտնաբերվել են 3 կամ ավելի դեպքեր, գործատուն **պետք է** այդ խմբի վերաբերյալ զեկուցի Հանրային Առողջապահության Վարչություն

(888) 397-3993 կամ (213) 240-7821 հեռախոսահամարներով **կամ առցանց՝**
www.redcap.link/covidreport: Եթե աշխատավայրում վարակված խումբ է հայտնաբերվել, Հանրային Առողջապահության Վարչությունը խմբի նկատմամբ արձագանք կնախաձեռնի, որը ներառում է վարակի վերահսկման ցուցումների և խորհուրդների տրամադրում, մասնագիտական օժանդակություն և հաստատության համար առանձնահատուկ վերահսկման միջոցառումներ: Կնշանակվի խմբի հետագրտման գործի ղեկավար՝ օգնելու ուղղորդել հաստատության արձագանքը:

- Այն աշխատակիցներին, ովքեր շփվում են ուրիշների հետ, անվճար տրամադրվում է դեմքի ծածկոց, որը ծածկում է քիթը և բերանը: Աշխատակիցը պետք է մշտապես կրի դիմակը ողջ աշխատանքային օրվա ընթացքում՝ այլ անձանց հետ շփվելու կամ շփման հավանականության պարագայում: Աշխատակիցները, ում բուժաշխատողները հանձնարարել են չկրել դեմքի ծածկոցներ, պետք է կրեն ներքևի եզրին շղարշ ունեցող դեմքի վահաններ, որպեսզի համապատասխանեն Նահանգային պահանջների պայմաններին, եթե միայն նրանց վիճակը դա թույլ է տալիս: Նախընտրելի են այն տեսակի շղարշները, որոնք մարմնի ձևն են ստանում կզակի տակ: Միակողմանի փականներ ունեցող դիմակները չպետք է կիրառվեն: Աշխատակիցները կարիք չունեն դեմքի ծածկոցներ կրել, երբ մենակ են անձնական գրասենյակում կամ ամուր միջնապատերով առանձնացված աշխատատեղում, որի միջնապատերի բարձրությունը գերազանցում է աշխատակցի հասակը կանգնած ժամանակ:
- Համաձայն COVID-19-ի ՎԵՐԱՀՍՎԿՄԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԻ ՀՐԱՄԱՆԻ՝ ԿԱՐԳ 1 ՆՇԱՆԿՎԱԼԻ ԱՐՁԱԳԱՆՔԻ, որը տրվել է 2020թ.-ի Նոյեմբերի 28-ին, բոլոր աշխատակիցները պետք է դեմքի ծածկոցներ կրեն, բացառությամբ այն պահերի, երբ միայնակ աշխատում են անհատական գրասենյակներում, որոնց դռները փակ են, կամ երբ ուտում կամ խմում են: Նախկինում կատարված բացառությունը, որը կատարվել է աշխատողների հասակը գերազանցող ամուր միջնապատերով խցիկներում աշխատող աշխատողների համար, փոխարինվում է ժամանակավոր հրամանի գործող ժամանակահատվածում՝ 2020 թ.-ի Նոյեմբերի 30-ի առավոտյան ժամը 12: 01-ից (PST) մինչև հետագա ծանուցում:
- Դիմակների հետևողական և ճշգրիտ կիրառումն ապահովելու համար աշխատակիցներին չի խրախուսվում ուտել կամ խմել՝ բացառությամբ իրենց ընդմիջումների ժամերը, երբ նրանք կարող են անվտանգ կերպով հանել իրենց դիմակները և մյուսներից ֆիզիկական հեռավորություն պահպանել: Ուտելիս կամ խմելիս աշխատակիցները պետք է մյուսներից առնվազն վեց ոտնաչափ հեռավորություն պահպանեն: Նախընտրելի է ուտել կամ խմել դրսում և հնարավորության դեպքում մյուսներից հեռու: Խցիկում կամ աշխատավայրում ուտելը կամ խմելը գերադասելի է, ընդմիջման սենյակում ուտելուց, եթե խցիկում կամ աշխատավայրում ուտելը աշխատողներից ավելի մեծ հեռավորություն և միջնապատեր է տրամադրում:
- Չբաղվածությունը կրճատվում է, և աշխատողների միջև տարածությունն առավելագույնի է հասցվում ցանկացած սենյակում կամ տարածքում, որն աշխատակիցներն օգտագործում են ճաշելու և/կամ ընդմիջումների համար: Այս պահանջին հնարավոր է հասնել հետևյալ կերպ.
 - Փակցնել առավելագույն զբաղվածության **նշան**, որը համապատասխանում է ընդմիջումների համար օգտագործվող սենյակներում կամ տարածքներում առնվազն վեց ոտնաչափ հեռավորության ապահովմանը և
 - Փոփոխել ընդմիջումների կամ ճաշի ժամերը՝ ճաշերի և ընդմիջումների համար օգտագործվող սենյակներում կամ տարածքներում զբաղվածության թիվը նվազեցնելու համար, և
 - Սեղանները դնել **առնվազն** վեց ոտնաչափ հեռավորության վրա և ապահովել նստատեղերի միջև վեց ոտնաչափ հեռավորությունը, նստատեղերը հեռացնել կամ ժապավեններ կպցնել՝ զբաղվածությունը նվազեցնելու համար, հատակների վրա գծանշումներ դնել՝ հեռավորությունն ապահովելու համար, և նստատեղերը դասավորել այնպես, որ նվազագույնի հասցվի դեմ առ դեմ շփումը: Միջնապատերի օգտագործումը խրախուսվում է՝ տարածման հետագա կանխարգելման համար, բայց չպետք է համարվի զբաղվածության կրճատմանը և ֆիզիկական հեռավորության պահպանմանը փոխարինող միջոց:

- Հնարավորության դեպքում ստեղծվել են բացօթյա ընդմիջման տարածքներ, որոնք հագեցած են ստվերային ծածկոցներով և նստատեղերով, որոնք աշխատակիցներին հնարավորություն են տալիս 6 ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն պահպանել մյուսներից:
- Աշխատողներին հանձնարարվում է ամեն օր լվանալ կամ փոխել իրենց կտորե դիմակները:
- Բոլոր աշխատատեղերը իրարից առանձնացված են առնվազն վեց ոտնաչափով:
- Ընդմիջման սենյակները, պետքարանները և այլ ընդհանուր տարածքները ամեն ժամ ախտահանվում են հետևյալ ժամանակացույցով.
 - Ընդմիջման սենյակներ _____
 - Պետքարաններ _____
 - Այլ _____
- Վարձատրման և աշխատանքային ժամերի կանոնակարգերի համաձայն, ընդմիջումները կազմակերպվում են այնպես, որ ընդմիջման սենյակներում աշխատողների միջև միշտ հնարավոր լինի պահպանել վեց (6) ոտնաչափ հեռավորություն:
- Ախտահանիչ և հարակից կյուբերը հասանելի են աշխատողներին հետևյալ վայր(եր)ում`

-
- COVID-19-ի դեմ արդյունավետ ձեռքերի ախտահանիչները հասանելի են բոլոր աշխատողներին հետևյալ վայր(եր)ում`

-
- Աշխատողներին թույլատրվում է հաճախակի ընդմիջումներ վերցնել` ձեռքերը լվանալու համար:
 - Այս արձանագրության կրկնօրինակը բաժանվել է բոլոր աշխատողներին:
 - Յուրաքանչյուր աշխատողի հատկացվում են իր սեփական պարագաները, սարքավորումները և աշխատելու համար սահմանված վայրը: Ընդհանուր օգտագործման առարկաների (օրինակ` հեռախոսներ, պլանշետներ, համակարգիչներ, սեղաններ, գրիչներ և այլն) համատեղ օգտագործումը ըստ հնարավորության հասցվում է նվազագույնի կամ բացառվում:
 - Սույն ստուգաթերթիկում նկարագրված բոլոր քաղաքականությունները, բացի աշխատանքային պայմաններին վերաբերող քաղաքականություններից, վերաբերում են առաքման անձնակազմին և ցանկացած այլ ընկերություններին, որոնք կարող են այդ տարածքում գտնվել որպես երրորդ անձ:
 - Ընտրովի. նկարագրեք այլ միջոցառումներ.

B. ՖԻԶԻԿԱԿԱՆ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Առևտրի կենտրոններում (փակ և բացօթյա) և առևտրի կենտրոնի մաս կազմող մանրածախ ձեռնարկություններում առավելագույն զբաղվածության կանոնների համաձայն առավելագույն զբաղվածությունը չպետք է գերազանցի 20%-ը` այն պայմանով, որ հաճախորդների և աշխատակիցների միջև միշտ կարող է պահպանվել 6 ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն: Հնարավորության դեպքում կայանատեղերը սահմանափակվում է զբաղվածության առավելագույն սահմանափակումները հետագայում պահպանելու համար:
- Վարձակալները, որոնք ունեն արտաքին մուտք, որը հասարակությանը սովորաբար հասանելի է մեծ հանրախանութի (mall) կամ առևտրի կենտրոնի արտաքին մասից, կարող են շարունակել իրենց ընթացիկ փոփոխված գործողությունները` համապատասխան DPH-ի Արձանագրություններին` առավելագույնը 20% զբաղվածությամբ: Բացօթյա առևտրի կենտրոնները` ինչպիսիք են տոնավաճառները, պետք է վաճառողներին ապահովեն սեղաններով, վրաններով և այլ ցուցասարքերով` համապատասխան ֆիզիկական հեռավորության պահպանման պահանջների համաձայն կամ նրանց տեղում ապահովեն այլ անթափանց արգելապատնեշներով:
 - Հաստատությունում հաճախորդների առավելագույն քանակը սահմանափակվում է.
- Առևտրի կենտրոնը վերահսկում է բոլոր մուտքերը` զբաղվածությանը հետևելու **և սահմանափակելու** համար: Հնարավորության դեպքում տրամադրեք եզակի, պարզորեն նշված մուտք և առանձին ելք, որպեսզի օգնեք պահպանել ֆիզիկական հեռավորությունը:

- Պատրաստ եղեք դրսում հաճախորդների հերթ կազմել՝ միևնույն ժամանակ պահպանելով ֆիզիկական հեռավորությունը՝ ներառյալ տեսողական ազդանշաններ կիրառելով: Անհրաժեշտության դեպքում աշխատակիցը (կամ աշխատակիցները, եթե առկա է մեկից ավելի մուտք), ով դեմքի կտորե ծածկոց է կրում, կարող է կանգնել դռան մոտ, սակայն ամենամոտ հաճախորդից առնվազն 6 ոտնաչափ հեռավորության վրա, որպեսզի հետևի զբաղվածությանը և հաճախորդներին ուղղորդի մուտքից դուրս վեց ոտնաչափ հեռավորության վրա հերթ կանգնել, եթե հաստատությունը **կամ առևտրի կենտրոնը** հասել է զբաղվածության իր սահմանին:
- Տեղի անվտանգության ծառայության աշխատողները հաճախակի հիշեցնում և խորհուրդ են տալիս հաճախորդներին և հանրությանը հետևել ֆիզիկական հեռավորության չափանիշներին **և հիշեցնելու հաճախորդներին և այցելուներին, որ չի թույլատրվում տեղում ուտել կամ խմել:**
- Մանրածախ վաճառք իրականացնողները, որոնք առաջարկում են փողոցի կողմից մոտենալ-վերցնելու տարբերակը, պետք է նշեն ապրանքները մոտենալ-վերցնելու ժամերը, որպեսզի աշխատակիցները կարողանան նախապես պատվիրված ապրանքը մոտեցնել մեծ հանրախանութից (mall) դուրս գտնվող նախատեսված վայր կամ վայրեր: Մոտենալ-վերցնելու տարածքները պետք է հստակ նշված լինեն և հաճախորդներին պետք է հորդորել, որպեսզի նախապես վճարեն իրենց պատվերների համար: Ժամանելուն պես հաճախորդները պետք է տեղեկացնեն աշխատակցին, որ նրանք ժամանել են, որպեսզի վերցնեն ապրանքը և պետք է մնան մեքենայի մեջ: Կտորե դիմակ կրող աշխատակիցը, պետք է նախատեսված վերցնելու վայր բերի հաճախորդի պատվերը՝ տարայի մեջ (օր.՝ արկղ, առևտրի զամբյուղ, կամ այլ տարա) և տեղադրի այն անմիջապես հաճախորդի մեքենայի բեռնախցիկում:
- Առևտրի կենտրոնի ներսում գործող հիմնական ծառայությունները, օրինակ՝ բժշկական ծառայություններ (կլինիկաներ կամ ակնաչափողներ) կարող են շարունակել իրենց գործունեությունը:
 - Հնարավորության չափով պետք է առաջարկվեն այլ մեթոդներ՝ ինչպես օրինակ հեռավար բուժօգնության տարբերակը կամ առցանց ծառայությունները:
- Աշխատակիցը (կամ աշխատակիցները, եթե կան մեկից ավելի մուտքեր) կտորե դիմակով պետք է կանգնած լինի դռան մոտ, բայց մոտակա հաճախորդներից առնվազն 6 ոտնաչափ հեռավորության վրա, որպեսզի ուղղորդի հաճախորդներին դեպի մոտենալ-վերցնելու համապատասխան վայրը:
- Ժապավենը կամ այլ գծանշանները սահմանում են ինչպես սկզբնական վայրը՝ հաճախորդների կողմից պատվերը վերցնելու ժամանման համար, այնպես էլ 6 ոտնաչափ ընդմիջումները՝ հաջորդող հաճախորդների համար, ովքեր միանում են սպասման հերթին:
- Աշխատակիցները, որոնք կրում են դեմքի ծածկոցներ և ձեռնոցներ, պետք է դիրքավորվեն իրարից և հաճախորդներից 6 ոտնաչափ հեռավորության վրա, որպեսզի առաքեն պատվերները հաճախորդներին: Արկղերը պետք է կիրառվեն փաթեթավորված, նախապես պատվիրված ապրանքները հաճախորդներին փոխանցելու համար, որպեսզի խուսափեն հաճախորդների և աշխատակիցների միջև անձնական շփումից: Աշխատակիցները կարող են մի պահ մոտենալ վճարումը ստանալու, ապրանքը կամ ծառայությունները առաքելու կամ այլապես անհրաժեշտ նպատակներով:
- Առնվազն վեց (6) ոտնաչափ ֆիզիկական հեռավորությունն ապահովելու համար ձեռնարկվել են միջոցառումներ՝ առևտրի կենտրոնի բոլոր տարածքներում աշխատողների և հաճախորդների միջև ֆիզիկական հեռավորությունն ապահովելու համար: Սա կարող է ներառել ֆիզիկական միջնապատերի կամ տեսողական ցուցանակների օգտագործումը (օրինակ՝ հատակի վրա գծանշաններ, գունավոր ժապավեն կամ այլ նշաններ, որտեղ նշվում է, թե որտեղ պետք է աշխատողները և հաճախորդները կանգնեն):
- Մշակել և իրականացնել վերահսկվող երթևեկության և ամբոխի կառավարման ռազմավարություններ, որոնք հնարավորություն են տալիս հաճախորդների միջև պահպանել առնվազն վեց ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն: Սա կարող է ներառել, որ պահանջվի մեկ ուղղությամբ երթևեկություն, և հաճախորդներին ուղղորդել տեսողական ազդանշաններով, ֆիզիկական հենակներով և ցուցանակներով:
- Տրամադրել հստակ նշանակված մուտքեր և առանձին ելքեր, եթե դա հնարավոր է և տեղին է տարածքի համար, որպեսզի օգնել պահպանել ֆիզիկական հեռավորությունը և աջակցել ամբոխի վերահսկմանը: Հնարավորության դեպքում դռները պետք է բաց լինեն, եթե դրանք ինքնաբերաբար չեն բացվում և փակվում: Աշխատեք վարձակալների հետ, ֆիզիկական հեռավորությունը պահպանելով, անհրաժեշտության դեպքում առանձին խանութներից դուրս

հաճախորդների համար հերթերի համակարգեր ստեղծելու համար:

- Առևտրի կենտրոնների օպերատորները, մանրածախ վարձակալները և վաճառողները պետք է համագործակցեն խանութների մուտքի հերթագրման համակարգերի զարգացման համար, որոնք չեն խաթարում երթևեկությունը կամ խախտում ֆիզիկական հեռավորության պահանջները: Նկատի ունեցեք և խրախուսեք մանրածախ վարձակալության հաստատությունների այլընտրանքային մուտքը՝ ներառյալ մուտքի համար թվային վերապահումները և նախնական պատվերների ցուցումները:
- Առևտրի սայլերին կամ կրպակներին պետք է թույլատրվի աշխատել առևտրի կենտրոնների միջանցքներում կամ քայլելու վայրերում, միայն եթե դրանք չեն խանգարում երթևեկության նորացված միջոցներին կամ խոչընդոտում ֆիզիկական հեռավորության պահանջներին: Անհրաժեշտության դեպքում վերադասավորեք վաճառող սայլերը կամ կրպակները, որպեսզի համոզվեք, որ հերթագրումը չի խոչընդոտում ֆիզիկական հեռավորության պահանջներին:
- Բացօթյա առևտրի կենտրոնները, ինչպիսիք են տոնավաճառները, պետք է ապահովեն, որ վաճառասեղանները, վրանները և այլ ցուցափեղկերը համապատասխանեն համապատասխան ֆիզիկական հեռավորության պահանջներին կամ ապահովեն այլ անթափանց խոչընդոտների առկայությունը:
- Առևտրի կենտրոնները, մանրածախ վարձակալները և վաճառողները պետք է համագործակցեն՝ մշակելու առևտրի կենտրոնների գործունեության ծրագիր, որը հնարավորություն կտա վարձակալներին իրականացնել անվտանգ գործունեություն առևտրի կենտրոնի ներսում և դրսում և պահպանել Հանրային Առողջապահության Վարչության (DPH) բոլոր կիրառելի արձանագրությունները և նահանգային և տեղական օրենքները և հրահանգները:
- Հանրային նստատեղերով փակ տարածքները չեն գործում: Բոլոր մշտական և ֆիքսված բացօթյա նստատեղերը (օրինակ՝ նստարաններ, աթոռներ, հանրային այլ նստատեղեր), որոնք բաց են հանրության համար, մշտական նստատեղի կողքին կամ մոտակայքում տեսանելի վայրում ունեն ցուցանակներ, որոնք հաճախորդներին հիշեցնում են դիմակ կրել, պահպանել ֆիզիկական հեռավորություն և չուտել կամ չխմել առևտրի կենտրոնի տարածքում գտնվելու ընթացքում:
- Բոլոր ժամանակավոր կամ շարժական սեղաններն ու աթոռները, որոնք գտնվում են առևտրի կենտրոնի տարածքում, պետք է հեռացվեն հանրությանը հասանելի տարածքներից կամ փակվեն հանրության համար: Հանրությանը/այցելուներին պետք է հիշեցնել, որ առևտրի կենտրոնի տարածքում չի կարելի ուտել կամ խմել:
- Ֆիզիկական հեռավորության պահանջները իրականացվում են բեռնաթափման գոտիներում, իսկ առաքման համար օգտագործվում են առանց հպման ստորագրություններ:

C. ՎԱՐԱԿԻ ՎԵՐԱՀՍՈՒՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- HVAC համակարգը բարեկարգ, սարքին վիճակում է; առավելագույն հնարավորության դեպքում օդափոխությունն ավելացվել է: Մտածեք բարձր արդյունավետության օդը մաքրող դյուրակիր սարքերի տեղադրման, շենքի օդային գոտիները հնարավորինս բարձր արդյունավետության հասցնելու և այլ փոփոխություններ կատարելու մասին՝ գրասենյակներում և այլ վայրերում դրսի օդի և օդափոխության քանակը ավելացնելու համար: Տե՛ս հանրային առողջապահության ուղեցույցը [օդափոխությունը](#) օպտիմալացնելու համար:
- Գործում են առանց հպման վճարային համակարգեր կամ, եթե հնարավոր չէ, վճարային համակարգերը ամեն ժամ ախտահանվում են: Նկարագրեք:

- Ընդհանուր և բարձր հոսքի գոտիները և հաճախակի հպվող առարկաները (օրինակ՝ բազրիքները, վերելակների կառավարման վահանակները, դռան կլոր կամ սովորական բռնակները, վարկային քարտերի համակարգերը, վերելակների կոճակները, շարժասանդուղքների բազրիքները) ամենժամյա հիմքով ախտահանվում են աշխատանքային ժամերին EPA-ի կողմից հաստատված ախտահանիչ միջոցներով՝ արտադրողի օգտագործման հրահանգներին համապատասխան:
- Աշխատատեղերը և ամբողջ հաստատությունը մաքրվում են առնվազն օրը մեկ անգամ, իսկ պետքարանները և հաճախակի օգտագործվող տարածքները/առարկաները՝ ամեն ժամ:

Առևտրի կենտրոնի աշխատանքային ժամերը փոխվել են՝ կանոնավոր խորը մաքրման և արտադրանքի պահեստավորման համար բավարար ժամանակ տրամադրելու համար:

- Հանրային պետքարանները ամենժամյա հիմքով մաքրվում են EPA-ի կողմից հաստատված ախտահանիչ միջոցներով՝ արտադրողի օգտագործման հրահանգներին համապատասխան և հետևյալ գրաֆիկով.

- Հասարակական խմելու ջրի շատրվաններն անջատված են և փակցված են ցուցանակներ, որոնք տեղեկացնում են հաճախորդներին, որ դրանք չեն աշխատում:
- Հաճախորդներին արգելված է օգտվել աշխատողների համար նախատեսված պետքարաններից:
- Հաստատություն ժամանող հաճախորդներին պետք է հիշեցնել, որ դեմքի ծածկոցներ կրեն առևտրի կենտրոնում և դրա տարածքում գտնվելու ամբողջ ընթացքում: Սա վերաբերվում է բոլոր չափահասներին և 2 տարեկան և ավելի մեծ երեխաներին: Միայն այն անձիք, ում բուժաշխատողը հանձնարարել է չկրել դեմքի ծածկոց, ազատվում են այս պահանջից: Ձեր աշխատակիցների և այլ այցելուների անվտանգությանն աջակցելու նպատակով՝ հարկավոր է դեմքի ծածկոցներ տրամադրել այն այցելուներին, ովքեր գալիս են առանց դրանց:
- Իրականացվում է ախտահանիչների ստուգումներ՝ նախքան այցելուներին կթույլատրվի հաստատություն մտնել: Ստուգումները պետք է ներառեն հագի, շնչարգելության, դժվարացած շնչառության, ջերմության կամ դողերոցի դիտարկում և արդյոք անձը տվյալ պահին գտնվում է մեկուսացման կամ կարանտինի հրամանների ներքո: Այս ստուգումները կարող են կատարվել հեռավար անհատապես կամ այլընտրանքային եղանակներով, օրինակ՝ ստուգման առցանց համակարգերով կամ հաստատության մուտքի մոտ փակցված [նշաններով](#):
- Երեխաների հետ հաստատություն մտնող հաճախորդները պետք է հետևեն, որ իրենց երեխաները մնան ծնողի կողքին, խուսափեն որևէ այլ անձանց կամ իրենց չպատկանող որևէ իրերի դիպչելուց և կրեն դիմակ, եթե տարիքը թույլ է տալիս:
- Հաճախորդներին հասանելի պետք է լինեն համապատասխան ախտահանիչ միջոցները՝ ներառյալ ձեռքերի ախտահանման միջոցները, անձեռոցիկները և աղբարկղերը:
- Հաճախորդների համար նախատեսված հանդերձարանները վերահսկվում են անձնակազմի կողմից: Ցանկացած հագուստ, որը փորձել են, բայց չեն գնել, մի կողմ է դրվում 24 ժամով մինչև դարակաշարերի կամ դարակների վրա հետ դնելը:
- Մանկական խաղահրապարակի տարածքները կամ այլ հարմարությունները, ինչպիսիք են կարունելները, ատրակցիոնները կամ խաղային ավտոմատները մնում են փակ:
- Առևտրի կենտրոնի սահմաններում տեղակայված կինոթատրոնները, ընտանեկան ժամանցի կետերը և բարերը մնում են փակ:
- Շինությունների ներսում գտնվող առևտրային կենտրոնի կամ մեծ հանրախանութների (mall) փակ տարածքում գտնվող սննդի կետերի (food court) նստելու և ճաշելու հատվածները պետք է փակվեն, մինչև հետագա ծանուցումը: Շինությունների ներսում գտնվող առևտրային կենտրոններում կամ մեծ հանրախանութների (mall) տեղակայված այն ռեստորանները, որոնց մուտքը միայն հանրախանութի ներսից է, կարող են առաջարկել ներսում վաճառատաների ծառայություններ հաճախորդների կողմից սննդի և խմիչքների անձամբ պատվիրելու և վերցնելու կամ առաքման նպատակով: **Ճաշելու բոլոր բացօթյա տարածքները պետք է փակվեն: Հանրությանը չի թույլատրվում սնունդ կամ խմիչք օգտագործել փակ մեծ հանրախանութների (mall) կամ առևտրի կենտրոնի որևէ տարածքում:**
- Մեծ հանրախանութների (mall) կամ առևտրի կենտրոնի ներսում գտնվող այն ռեստորանները, որոնք հասանելի են նաև առևտրի կենտրոնի դրսի կողմից, կարող են առաջարկել սննդի դուրսբերման, մեքենայով անցնել-վերցնելու կամ առաքման ծառայություններ՝ համապատասխան DPH-ի [Ռեստորանների համար Արձանագրություններին](#): Ճաշելու բոլոր բացօթյա տարածքները պետք է փակվեն:
- Ընտրովի. նկարագրեք այլ միջոցառումներ (օրինակ՝ ժամերի տրամադրում միայն տարեցների համար, խրախուսել առցանց պատվերները/ պատվերները տեղում վերցնելը, խթանել ոչ ծանրաբեռնված ժամերի վաճառքը):

D. ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՄԻՋՑԱՌՈՒՄՆԵՐ

- Այս արձանագրության կրկնօրինակը փակցվում է հաստատության բոլոր ընդհանուր մուտքերի մոտ:
- Ցուցանակները, որոնք տեղակայված են առևտրի կենտրոններում, տոնավաճառներում և այլ առևտրի կենտրոններում հիշեցնում են հաճախորդներին պահպանել վեց ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն, ամբողջ ընթացքում դեմքի ծածկոց կրելու անհրաժեշտության, կանոնավոր կերպով ձեռքերը լվանալու կարևորության և հիվանդ լինելու կամ COVID-19-ի ախտանիշներ ունենալու դեպքում տանը մնալու անհրաժեշտության մասին:
- Առևտրի կենտրոնի տարածքում փակցված ցուցանակները հաճախորդներին հիշեցնում են, որ տեղանքում որևէ տեղ չի թույլատրվում ուտել կամ խմել:
- Առևտրի կենտրոնում փակցված ցուցանակները հաճախորդներին բացատրում են, թե որտեղ է գնվում մոտակա ախտահանիչ միջոցների սարքը:
- Հաստատության առցանց կետերը (վեբ կայք, սոցիալական ցանցեր) տալիս են հստակ տեղեկություն խանութի աշխատանքային ժամերի, դիմակներ կրելու անհրաժեշտության, սահմանափակ զբաղեցվածության մասին, ինչպես նաև ցանկացած քաղաքականությունների մասին, որոնք վերաբերում են նախնական պատվերների, կանխավճարների, տեղում ստանալու և (կամ) առաքման և այլ համապատասխան հարցերի վերաբերյալ:

E. ՄԻՋՑԱՌՈՒՄՆԵՐ, ՈՐՈՆՔ ԱՊԱՅՈՎՈՒՄ ԵՆ ԿԱՐԵՎՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՍԱՐ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

- Անհատական գնումների ժամեր են ստեղծվել խոցելի բնակչության, այդ թվում տարեցների և բժշկական խոցելի խմբերի համար, անհրաժեշտության դեպքում, գերադասելի է ամբողջական մաքրումից հետո:
- Հաճախորդների / գնորդների համար կարևոր նշանակություն ունեցող ծառայությունները առաջնահերթ են դարձել:
- Գործարքները կամ ծառայությունները, որոնք կարող են առաջարկվել հեռավար կարգով, այժմ իրականացվում են առցանց տարբերակով:
- Միջոցներ են ձեռնարկվում ապրանքների և ծառայությունների հասանելիությունը ապահովելու համար այն հաճախորդներին, ում շարժունակությունը սահմանափակված է և (կամ) հանրային տարածքներում գտնվելը ավելի վտանգավոր է:

Վերոհիշյալ միջոցառումներում չընդգրկված ցանկացած լրացուցիչ միջոցառումներ պետք է նշվեն առանձին էջերում, որը բիզնեսը պետք է կցի այս փաստաթղթին:

Այս արձանագրության հետ կապված ցանկացած հարցի կամ մեկնաբանության համար կարող եք կապվել հետևյալ անձի հետ՝

Բիզնեսի Կոնտակտի Անունը՝ _____ **Հեռախոսահամարը՝** _____

Վերջին Վերանայված Ամսաթիվը՝ _____